ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2016 թվականի **թիվ 3** քաղ. Աստանա

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը եւ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 15.6 հոդվածի 1-ին կետին համապատասխան եւ ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի տեղեկատվությունը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ընթացքի վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական միության համար Համաձայնագիրը պարտադիր ճանաչել այն ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝

Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից եզրափակվելու վերաբերյալ վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության հասցեով ուղարկել Համաձայնագրի 15.6 հոդվածի 1-ին կետով նախատեսված ծանուցումը.

Համաձայնագրի 15.6 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ծանուցումը Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կողմից ստանալու վերաբերյալ հաստատումն ստանալուց հետո Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա մասին տեղեկացնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**